

«ԽՈՍՍԵԼ» ԲԱՅԻ ԻՄԱՍՏԱՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Բառերի շարահյուսական և իմաստային հատկանիշների միջև գոյություն ունի կանոնավոր համապատասխանություն: Այդ կապը երկկողմանի է՝ բառի իմաստը պայմանավորում է նրա շարահյուսական հատկանիշները և, ընդհակառակը, շարահյուսությունը իր ազդեցությունն է թողնում բառ-իմաստի վրա՝ ձևափոխելով այն¹:

Ներկայացվող հոդվածի նպատակն է վեր հանել խոսքի իմաստային առանձնահատկությունները և ցույց տալ նրա իմաստային ու շարահյուսական հատկանիշների միջև եղած կապը:

Բայի իմաստային հատկանիշներ ասելով նկատի կունենանք նրա տարբեր իմաստները, որոնք բնութագրում են նրան և որոնք ներկայացվում են բառարանային մեկնաբանությամբ: Շարահյուսական հատկանիշներ ասելով հասկանում ենք այն խնդրառությունները, որոնք իրականացնում են բայի յուրաքանչյուր տվյալ իմաստը: Մենք նույնացնում ենք խնդրառություն և արժույթ հասկացությունները և խնդրառությունը համարում արժույթի իրականացումը: Այս կապակցությամբ պրոֆ. Գ. Բ. Զահուկյանը դրում է. «Արժույթը ոչ այլ ինչ է, եթե ոչ կառավարության (խնդրառության) գաղափարի հետագա ընդարձակումը ... Ավելի լայն առումով արժույթը բայի կապակցելիությունն է ենթակայի, խնդիրների և պարագաների հետ: Կարելի է ասել, որ արժույթը որոշում է բայի էությունը: Ըստ բայի հետ կապվող միավորների բնույթի՝ արժույթը կարող է հանգես դալ որպես՝ ... դ) խնդրառություն (տարբեր տիպի խնդիրներ ստանալը կամ շտանալը)»², Իսկ Ե. Վ. Պադուչենան հետևյալ կարծիքն է հայտնում. «Բառույթի խնդրառությունը որոշվում է շարահյուսական խնդրառության կաղապարի ամբողջությամբ, որտեղ խնդրառության յուրաքանչյուր կաղապար բառույթի շարահյուսական արժույթների ամբողջություն է»²:

¹ Տե՛ս Ե. Դ. Ապրեսյան, Экспериментальное исследование семантики русского глагола, М., 1967, с. 25—29.

² Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 466, 467, Ե. Վ. Պադուչենա, О семантике синтаксиса. Материалы к трансформационной грамматике русского языка, М., 1974, с. 40.

Իրոք, իմաստային արժույթները, այսինքն այն արժույթները, որոնք անմիջականորեն կապված են բառի իմաստի հետ, հիմք են դառնում կախյալ բառերի հետ շարահյուսական կապերի համար³։ Փաստորեն կախյալ բառերի քանակը և ամեն մի կիրառության ժամանակ ներանցից յուրաքանչյուրի ձևը որոշվում է այն բառերի արժույթային ունակությամբ, որոնց հետ կապակցվում է կախյալ բառը։ Բառերի իմաստային արժույթայնությանը համապատասխանում է շարահյուսականը (այսինքն շարահյուսական կապակցման հնարավորությունը այնպիսի բառերի հետ, որը բավարարում է իմաստային արժույթայնության իրականացման պայմանները)⁴։ Այն բառույթը, որը նախադասության մեջ իրականացնում է մի այլ բառույթի շարահյուսական (իմաստային) արժույթը, համարվում է այդ բառույթի շարահյուսական (իմաստային) ակտանտը⁵։ Այսպիսով, յուրաքանչյուր շարահյուսական արժույթ հանդես է գալիս իբրև իմաստային արժույթի իրականացում։ Սակայն միշտ չէ, որ իմաստային արժույթին համապատասխանում է շարահյուսական արժույթը, այսինքն նախադասության մեջ բառի այս կամ այն շարահյուսական արժույթը չի իրականացվում։ Ասվածից բխում է, որ շարահյուսական կառույցները կարող են լինել ճազեցված, երբ իրականացվում են բոլոր արժույթները, և ոչ ճազեցված, երբ որևէ շարահյուսական արժույթ իրականացված չէ։

Մեր առջև դրված խնդիրը լուծում ենք խոսքի բայով և նրա իմաստային (շարահյուսական) ակտանտներով՝ կառույցների դիտարկմամբ։ Այդ կառույցները կարող են լինել հազեցված և ոչ հազեցված։ Դրանք ներկայացվում են կախվածության ծառերի տեսքով, ուր գագաթին համապատասխանեցված է խոսքի բայը, իսկ հանգույցներին՝ իմաստային ակտանտները իրենց շարահյուսական և իմաստային բնութագրերով, որոնք անհրաժեշտ են իմաստների տարբերակման համար։ Ճյուղերը կրում են նշաններ, ըստ բայի և նրա ակտանտների միջև եղած կապի տիպերի։ Նշված է կապի երեք տիպ, որոնք համապատասխանում են քննարկվող բայի իմաստային արժույթայնությանը՝ սուբյեկտային, օբյեկտային և ընկալողի։ Բերված ծառը ներկայացնում է խոսքի բայով կառույցների իմաստաշարահյուսական պատկերը։

Խոսքի բայը պատկանում է ասացական բայերն բառաիմաստային խմբին։ Այդ խմբի բայերը միավորվում են ընդհանուր իմաստային

³ Իմաստային արժույթայնության մասին տե՛ս Ю. Д. Апресян, К построению языка для описания синтаксических свойств слова. Проблемы структурной лингвистики 1972, М., 1973, с. 280; Е. В. Падучева, *Уч. зап.*, էջ 44։

⁴ Տե՛ս Е. В. Падучева, *Уч. зап.*, էջ 45։

⁵ Տե՛ս նույն տեղում։

հետևյալ հատկանիշով՝ միտք արտահայտել կամ ինֆորմացիա հաղորդել գերազանցապես բանավոր ձևով: Ասացական բայերը առավելապես եռարժույթ են, նրանց իմաստային արժույթներն են՝ սուբյեկտային (խոսողության սուբյեկտը անձ է), ընկալողի (ում ուղղված է խոսքը, այս գեպքում ևս խոսքը անձի մասին է) և օբյեկտային կամ բովանդակության արժույթ (ինչի մասին է խոսվում): Օր.՝ ասել—ով, ում, ինչ, խոսել—ով, ում հետ, ինչի (ում) մասին:

Այս բայերի արժույթայնության մասին արտահայտված առավելապես վերապահությունը արվեց այն դեպքերի համար, երբ՝ 1. խոսողության բայը եռարժույթ չէ. Առանձնացվում է երգվել բայը, որը նըշված արժույթներից բացի օժտված է նաև ումով—ինչով օբյեկտային արժույթով (նկատի չունենք այնպիսի դեպքեր, ինչպես՝ խոսել հեռախոսով, խոսել քաղաքացի միջոցով և այլն), և 2. խոսողության բայը իր իմաստներից մեկի դեպքում եռարժույթ չէ: Ստորև կբերվեն խոսել բայի այն իմաստները, որտեղ բայը հանդես է գալիս որպես միարժույթ և երկարժույթ: Հետազոտվող բայով կազմված ոչ հագեցած շարահյուսական կառույցներում թերի է լինում կամ ընկալողի արժույթը, կամ բովանդակության արժույթը: Սակայն, այդ արժույթների բացակայությունը շարահյուսական կառուցվածքում չի նշանակում նրանց բացակայությունը նաև խոսողության գործողություն արտահայտող բայերի իմաստային կառուցվածքում: Բնական է, որ կարծիքները, մտքերը, դատողությունները ասվում են ինչ-որ մեկին, ինչ-որ բանի մասին (հմմտ. ասել, հայտնել, հաղորդել—ում, ինչ, զբոսել, խոսել—ում հետ, ինչի մասին):

Այսպիսով, ինչպես «...բացարձակ իմաստով արժույթազուրկ բայեր լինել չեն կարող. զրո արժույթի բայերի մասին կարելի է խոսել միայն հարաբերականորեն՝ ըստ բառաքերականական դրսևորման բացակայության»⁶, այնպես էլ չի կարելի խոսել ասացական այնպիսի բայերի մասին, որոնք ընդհանրապես զուրկ լինեն ընկալողի կամ բովանդակության արժույթից: Բովանդակության կամ ընկալողի զրո արժույթը շարահյուսական մակարդակում չիրականացված իմաստային արժույթ է: Խոսողության բայերի, հետևաբար նաև խոսել բայի բառային իմաստները ընդգրկում են «խոսել ինչ որ բանի մասին» իմաստը և պարունակում են գործողության ուղղվածությունը խոսողից (սուբյեկտ) դեպի ունկնդիրը (ընկալող), քանի որ խոսքի առանձին ակտը, խոսողության ակտը սովորաբար երկկողմանի պրոցես է և ենթադրում է առնվազն երկու մասնակից՝ խոսող (սուբյեկտ), ընկալող, որին ուղղված է խոսքը (բանավոր հաղորդակցման դեպքում), իսկ գրավոր հաղորդակցման

⁶ Տե՛ս Գ. Բ. Զախարյան, նշվ. աշխ., էջ 467:

ժամանակ զրոգը՝ սուբյեկտ և կարգացողը՝ ընկալող⁷։ Խոսողության գործողության ուղղվածությունից կախված խոսողության բայերը բաժանվում են իմաստային երկու տիպի՝ 1. խոսողության միազիժ ուղղվածությամբ ասացական բայեր և 2. խոսողության փոխադարձ ուղղվածության ասացական բայեր⁸։

Խոսողության միազիժ ուղղվածության ասացական բայերի թվին պատկանող բայերը ցույց են տալիս խոսողության այնպիսի ակտ, որտեղ խոսողությունը ուղղված է խոսողից լսողին։ Այդ բայերի սուբյեկտը և ընկալողը խստորեն սահմանադատված են միմյանցից, այստեղ որոշակիորեն առանձնանում են խոսողը և լսողը՝ սուբյեկտը և ընկալողը։ Այդպիսի բայերի թվին են պատկանում ասել, ճայտնել, ճաղադել և այլն։


Խոսողության փոխադարձ ուղղվածության ասացական բայերի թվին պատկանողները ցույց են տալիս խոսողության այնպիսի ակտ, որ խոսողության դործողությունը ուղղված չէ խոսողից լսողին և այդ պատճառով խոսողության մասնակիցները խստորեն չեն սահմանադատված, նրանք կարող են փոխ առ փոխ տվյալ խոսքային իրավիճակում հանդես գալ և՛ խոսողի, և՛ լսողի դերերում։ Այդպիսի բայերի թվին են պատկանում՝ զրուցել, խոսակցել, վիճել և այլն։

Միևնույն բայը իր տարբեր իմաստներով կարելի է հատկացնել տարբեր իմաստային տիպերի։ Ինչպես ցույց կտրվի ստորև, խոսել բայը այդպիսին է՝ այն կարող է հանդես գալ ինչպես միազիժ, այնպես էլ փոխադարձ ուղղվածության խոսողության գործողության իմաստներով։


Նշվել է արդեն, որ խոսողության գործողության սուբյեկտը և ընկալողը անձ են։ Անձ/ոչ անձ հատկանիշների ներմուծման անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ այդ հատկանիշների հակադրումը հանգեցնում է տվյալ բայի իմաստի փոփոխության։ Այն դեպքերում, երբ սուբյեկտը և ընկալողը անձ ցույց տվող բառեր են, հանդես են գալիս խոսել բայի ուղիղ իմաստները, այսինքն՝ խոսողության իմաստները (որոնք մեղ հետաքրքրում են), իսկ երբ դրանք անձեր չեն, ապա՝ փոխաբերական իմաստները։ Հետևաբար, նշված հակադրումը կարելի է համարել տարբերակիչ հատկանիշ քննարկվող բայի ուղղակի և փոխաբերական իմաստները առանձնացնելու։ Անձ/ոչ անձ ցույց տվող բառերը մենք կհամարենք բառային սահմանափակում ենթա-

⁷ Տե՛ս Ե. Ս. Маслов, Введение в языкознание, М., 1975, с. 6.

⁸ Տե՛ս այդ մասին Ժ. Մանուկյան, Ժամանակակից հայերենի ասացական բայերը և նրանց իմաստային տիպերը, «Լրագր» (Հասարակական գիտություններ), Երևան, 1978, № 11։



Փարերը խոսում են



Այդ մասին փաստերն են խոսում:
Այս ստեղծագործությունը նրա մեծ տաղանդի
մասին է խոսում (է. Աղայան, Նշվ. բառարանը)։

3. «Խոսելու գործողության կատարման ընդունակություն» իմաստին հարում է տիրապետել օրևել լեզվի իմաստը։ Այս իմաստը բառային պայմանավորվածություն ունի, որ ցույց է տալիս օրևել լեզու¹¹։ Այս իմաստի դեպքում երկրորդ հանգույցին համապատասխանում է որոշ-չային կապ։ Բայը այս իմաստով, ինչպես նաև առաջին իմաստով նշված երկու իմաստային տիպերից ոչ մեկին չի պատկանում։



Երեխան խոսում է հայերեն (անդերեն, ռուսերեն և այլն)։

4. Խոսել բայի հաջորդ դիտարկվող իմաստը՝ բանավոր խոսքով կարծիքներ, մտքեր, դատողություններ արտահայտել՝ ասել՝ հայտնել, հաղորդել լուրեր՝ իրողություններ և այլն, իրականացվում է այնպիսի ենթատեքստում, ուր այդ բայը խնդրառում է գոյականի (դերանվան) սեռական հոլով մասին կապով (բովանդակային արժույթ) — խոսել ինչի (ում) մասին։

Նշենք, որ մասին կապով բովանդակային արժույթը հոմանիշ է բացառականով, ինչպես նաև վրա կապով ձևերին¹², օրինակ՝ խոսել ճանապարհորդությունների մասին $\leftarrow \rightarrow$ խոսել ճանապարհորդությունների վրա։


Այս իմաստի դեպքում ընկալողի արժույթը կարող է իրացվել առջև կամ մտ կապերով (խոսել մեկի առջև, մեկի մոտ), որը հաճախ

¹¹ Նշենք, որ որպես բացառություն այստեղ դիտարկում ենք բառային գործունեւ պայմանավորված իմաստը, շիշեցենք նաև, որ ըստ Հր. Աճառյանի -երեն ածանցը սե-րում է ինչպես մակբայներ, այնպես էլ ածականներ ու գոյականներ։

¹² Խոսել բայի վրա-ով խնդրառությունը այս նշանակությամբ այժմ հնացած է։

զեղչվում է: Այս երևույթը, կարելի է բացատրել այն բանով, որ խոսել բայը իր այս նշանակությամբ միազիժ ուղղվածության բայերի շարքն է գասվում, որտեղ հանգես է գալիս խոսողության մենախոսական բնույթը:

Դիտարկենք այդ նշանակությամբ բայի կառուցվածքը:




Խանը այնպես հասարակ կերպով էր խոսում իր ընտանեկան զաղտնիքների վրա, կարծես... (Բաժ., 6, 83):

Նա խոսեց իր սիրո մասին:

— Այո՛, տեր հայր, քեզանից ենք խոսում,— պատասխանեց Պետրոսը (Մուր., 4, 77):

Տվյալ նշանակությունը կարելի է գնահատել իբրև խոսել բայով արտահայտված գործողությունը առավել լրիվ կերպով արտացոլող ամենաբնորոշ իրադրության նկարագրություն:

5. Խոսել բայը փոխադարձ ուղղվածության բայ է զրույց անել, զրուցել, խոսակցել իմաստով: Բայի տվյալ իմաստի շարահյուսական պայմանավորվածությունը արտահայտվում է այն բանում, որ այդ իմաստը իրացվում է այնպիսի ենթատեքստերում, ուր ընկալողի արժույթը արտահայտվում է հետ կապով սեռական-տրական խնդրառությամբ: Այս նշանակությամբ բայը խնդրառում է հետ (ընկալողի արժույթ) և մասին (բովանդակային արժույթ) կապեր, օրինակ՝ Ես խոսեցի նրա հետ այդ մասին: Սակայն շարահյուսական կառույցը կարող է ոչ հագեցած լինել, ուր չի իրացվում բովանդակային արժույթը:




Այս նշանակության դեպքում ընկալողի և սուբյեկտի արժույթները կարող են իրացվել նաև գոյականի հոգնակի թվով, և կամ ու շաղկապներով կապված գոյականներով և հետ կապով փոխադարձ դերանունով: Օրինակ՝ 1. Ղեկավարները խոսեցին իրար հետ այդ մասին, 2. Ես և նա խոսեցինք իրար հետ այդ մասին, 3. Մենք խոսեցինք միմյանց հետ այդ մասին:

Նշենք, որ բերված նախադասությունները (2,3) չի կարելի համարել ընդ խոսեցի նրա հետ այդ մասին՝ նախադասության փոխակերպեր, քանի որ զրույցը վարող ակտիվ գործող անձը, որ հանդես է գալիս այս


նախադասության մեջ, շեղոթանում է վերը բերված (2,3) նախադասու-
թյուններում:

Ներկայացնենք այդ իմաստի ընդհանուր կառուցվածքը:




6. Նշենք, որ խոսել բայի չղրուցելն իմաստով բովանդակության շիրականացված արժույթով ոչ հաղեցած կառույցը համանունություն ունի: Երկրորդ իմաստը հոմանիշ է հաշտվել, միմյանց հետ խոսվ լինե-լուն վերջ տալ իմաստին: Այս նշանակությամբ խոսել բայը երկարժույթ է, ուր իրացվում են սուբյեկտի և ընկալողի արժույթները. Ես խոսում եմ նրա հետ: Մենք խոսում ենք իրար հետ: Ես և նա խոսում ենք իրար հետ:

Այս իմաստով երկարժույթ կառույցը հագեցած է, բայը չի արտա-հայտում կոնկրետ խոսողական ակտ և չի կարելի այն որևէ իմաստա-յին տիպի հատկացնել:




7. Առանձնացված է հակահանդիման, առարկել, բողոքել իմաստը: Այս իմաստը իրացվում է դեմ կապով սեռական հոլովով խնդրառության դեպքում (բովանդակային արժույթ) և մտ, առջև կապերով (ընկալողի արժույթ): Սովորաբար կիրառվող կառույցը հագեցած չէ՝ բացակայում է ընկալողի արժույթը: Այս նշանակությամբ խոսել բայը միագիծ ուղղ-վածության բայ է:

Ոչ ոք չի խոսում նրա դեմ: Նա խոսում էր գիտության դեմ:




Այս իմաստով խոսել բայը նաև փոխադարձ ուղղվածության բայ է-
այս դեպքում շարահյուսական կառույցը կարող է միայն հագեցած լի-
նել, ուր բովանդակային արժույթը իրացվում է դեմ կապով, իսկ ըն-
կալողի արժույթը՝ ճեռ կապով, օրինակ՝ Նա խոսում էր Պողոսի ճեռ
գիտության դեմ, Ես և Պողոսը (մենք) խոսում ենք իրար ճեռ գիտու-
թյան դեմ:

Այսպիսով, խոսել (դեմ) ← →
հակաճառել, առարկել, բողոքել




8. Խոսել բայի ճանդիմանել, ճախառել իմաստը բառային և շա-
րահյուսական պայմանավորվածություն ունի: Բառային պայմանավոր-
վածությունը արտահայտվում է անձ նշանակությամբ ընկալողի ար-
ժույթով, իսկ շարահյուսականը՝ վրա կապով: Բովանդակային արժույթը
կարող է իրացվել ճամար կապով, սակայն չիրացված բովանդակային
արժույթով ոչ. հագեցած շարահյուսական կառույցը նույնպես հնարա-
վոր է, օրինակ՝ Մայրը խոսեց աղջկա վրա. բայը այս իմաստով միա-
գիծ ուղղվածության խոսողության բայ է:



Այսպիսով, խոսել (վրա) ← → նախառել, հանդիմանել:

9. Խոսել բայն ունի միտք աճել, մտածել իմաստը այնպիսի են-
թառեքստում, ուր ընկալողի արժույթը իրացվում է ճեռ կապով սեռա-
կան—տրական խնդրառությամբ, ըստ որում ընկալողի արժույթը իրաց-
վում է ինձ, քեզ, իր դերանուններով (խոսողն ու լսողը համընկնում են),
կամ գոյականով (ոչ անձ): Խոսել—ը այդ նշանակությամբ ներքին խոս-
քի բայ է: Օրինակ՝ Նա ինքն իր ճեռ խոսում էր:

Այս իմաստով բայի շարահյուսական կառուցվածքը կարող է լի-
նել ինչպես հագեցած, այնպես էլ ոչ հագեցած, ուր ղեղչվում է բովան-
դակային արժույթը:



Այսպիսով, կարելի է նշել, որ խոսել բայի իմաստային տարբերակումները պայմանավորված են անձ/ոչ անձ հատկանիշների հակադրությամբ և նրա խնդրառություններով:

Անձ/ոչ անձ հակադրությունը հանգեցնում է տվյալ բայի ուղիղ և փոխաբերական իմաստների տարբերակմանը, իսկ խնդրառությունը՝ նրա ուղղակի իմաստների տարբերակմանը:

Ստորև բերվում է խոսել բայի կառուցվածքաիմաստային համապատասխանությունների աղյուսակը:

«Խոսել» քայլի կառուցվածքային մասնաւորութիւններ
տպագրակ

Իմաստներ	Կառուցվածք				Իմաստա- յին տիպ	Օրինակներ
	1	2	3	4		
	2	3			5	6
Օգտակար բանաբան խոսքեր, որ- ոնք խոսքի բանաբան խոսք գործա- նքն են	Sub (անձ)	—	—	—	—	Նրանք խոսում է:
Վկայել, որովք բանի ազատաւո- րութիւնն ունենալ, մի բանի զննութեամբ լինել	Sub (որ անձ)	—	—	—	—	Փառքից խոսում են:
Տիրապետել որևէ լեզվի	Sub (անձ)	Obj (անձ/որ անձ) մասին	—	—	—	Այդ մասին փաստերն են խոսում:
Բանաւոր խոսքով կարծիքներ, խոսք, գաղափարներ, որոնք ստատիստիկ անել, հայտնել, հարգել, լուրեր, բնութագր- ներ	Sub (անձ)	Obj (անձ/որ անձ) (բ. հ. V մասին V զբա)	—	—	—	Նա խոսեց սիրտ մասին: — Այո, տեղ հայր, փոքրիկ ենք խոսում, — պատահական է բոլոր:
Ձրայից անել, գրութիւն, խո- սակցել	Sub (անձ) հոգ:	Obj (անձ/որ անձ) մասին	—	—	—	Նա ինչ էնա խոսեց սիրտ մասին: Մենք խոսեցինք բոլոր ենա տիրա մասին: Ղեկավարները խոսում են իրար հետ զործի մասին: Եւ ինչ խոսեցինք միմյանց հետ զեղբոր մասին:
	Sub (անձ) Sub ₁ (անձ) 4 Sub ₂ (անձ)	Obj (անձ/որ անձ) մասին	—	—	—	—

1	2	3	4	5	6
Հաշտվել, միմյանց հետ խռով լինելուն վերջ տալ	Sub (անձ)	—	Adr (անձ) հետ	—	Ես խոսում եմ Պետրոսի հետ:
	Sub (անձ) հոգ.	—	Adr (իրար V միմյանց) հետ	—	Նրանք խոսում են միմյանց հետ, Պետրոսը և Մարիամը խոսում են իրար հետ:
	Sub ₁ (անձ) և Sub ₂ (անձ)				
Հակառակ, տարվել, բողոքել	Sub (անձ)	Obj (անձ/ոչ անձ)	Adr (անձ) (առջև V մոտ)	միադիտ	Դու խոսում եիր գիտության (նրա) դեմ:
	Sub (անձ)	Obj (անձ/ոչ անձ)	Adr (անձ) հետ	փոշ	Նա խոսում էր Պետրոսի հետ գիտու- թյան դեմ: Մենք (ես և նա) խոսում ենք իրար հետ գիտության դեմ:
	Sub (անձ) հոգ.	Obj (անձ/ոչ անձ)	Adr (իրար V միմյանց) հետ		
	Sub ₁ (անձ) և Sub ₂ (անձ)				
Հանդիմանել, նախաձեռնել	Sub (անձ)	Obj (ոչ անձ) համար	Adr (անձ) վրա	միադիտ	Մայրը խոսում է աղջկա վրա:
Միտք անել, մտածել	Sub (անձ)	Obj (անձ/ոչ անձ) մասին	Adr (ոչ անձ V ինձ V քեզ V իր) հետ	—	Հայրը խոսում է իր սրտի հետ: Նա խոսում էր իր հետ:

Համառոտագրություններ

Մուր.—Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1953:

Րաֆ.—Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1956: